ՀՀ արդարադատության
նախարարություն

2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՌԱՄՅԱ ՌԱՁՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2023 թվականի տարեկան հաշվետվությունը թվերով





2023 թվականի տարեկան հաշվետվությունը ոլորտներով



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 11

Ենթակետ 1. Փակվել են ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկները, որի արդյունքում Երևան քաղաքի տարածքում՝ Սիլիկյան թաղամասում, կառուցվել է շուրջ 1200 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկ (200 մահճակալ նախատեսվել է բուժման կարիք ունեցող անձանց համար):

Ենթակետ 2. ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը Ազգային անվտանգության ծառայության վարչական շենքից տեղափոխվել է նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի մասնաշենք.

Ենթակետ 3. ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկը լուծարվել և ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի վարչական տարածքում կառուցվել է ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի համար սահմանված լրակազմով՝ փակ, կիսափակ ռեժիմների և կալանավորվածների պահելու վայր, այդ թվում՝ կալանք պատժատեսակի համար նախատեսված մասնաշենք.

Ենթակետ 4. ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկը փակվել է, և դրա փոխարեն կառուցվել է 350 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկ:

Ենթակետ 5. ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ստեղծվել են մինչև 200 լրակազմ ունեցող կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար անհրաժեշտ պահման պայմաններ:

Ենթակետ 6. ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկն ապահովվել է օդափոխության համակարգով:

Ենթակետ 7. ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում բժշկական ստացիոնար մասնաշենքի կարողությունները զարգացվել են:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Ենթակետ 1: Ռազմավարությամբ հաստատված՝ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավման և քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման շրջանակներում, ի թիվս այլնի, նախատեսված է փակել ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկները, որի արդյունքում Երևան քաղաքի տարածքում կկառուցվի միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր քրեակատարողական հիմնարկ՝ ընդգրկելով նաև ստացիոնար հիվանդանոց:

Նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման համար նախապատրաստական աշխատանքների շրջանակներում Արդարադատության նախարարության կողմից ձեռնարկվել են հետևյալ քայլերը՝

1) Միջազգային գործընկերների հետ ունեցած բանակցությունների արդյունքում Միջազգային Իրավական Համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) պատրաստակամություն է հայտնել աջակցելու նոր քրեակատարողական հիմնարկի մոդելի ընտրության, միջազգային բոլոր չափանիշների վեր հանման և դրանք հայաստանյան օրինակով տեղայնացնելու հարցում: Արդյունքում՝ արդեն իսկ կազմակերպվել են մի շարք քննարկումներ գերմանացի փորձագետի հետ: Բացի այդ, 2022 թվականի հունիս ամսվա ընթացքում տեղի է ունեցել հայկական պատվիրակության այցը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ տեղում ծանոթանալու գերմանական քրեակատարողական հիմնարկների մոդելին, ինչպես նաև նույն թվականի նոյեմբեր ամսին Արադարադատության նախարարությունում տեղի է ունեցել համատեղ հանդիպում, որի ժամանակ՝ Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) գործընկերներին ներկայացվել են նոր քրեակատարողական հիմնարկի հայեցակարգի մանրամասները:

2) Կազմվել է նոր քրեակատարողական հիմնարկի նախագիծ, տեխնիկական նախնական գծագիր և 3D ձևաչափով նոր քրեակատարողական հիմնարկի մոդել: Մշակվել են Նոր քրեակատարողական հիմնարկի հայեցակարգը, ինչպես նաև ազատազրկվածների զբաղվածության մոդելը:

3) Նոր քրեակատարողական հիմնարկի տարածքի ընտրության համար որպես հիմնական տարբերակ դիտարկվել է նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի տարածքը: Հաշվի առնելով նշվածը՝ Արդարադատության նախարարության կողմից պլանավորվել է ուսումնասիրել նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի և դրան հարող տարածքները՝ հնարավոր հողային խնդիրները վեր հանելու նպատակով: Ըստ այդմ՝ շինարարական աշխատանքներին ընդառաջ կառույցների տեղակայման տեղամասերում իրականացվել է ինժեներա-երկրաբանական հետազոտություն:

4) Պատրաստվել և Քաղաքաշինության կոմիտե է փոխանցվել Նոր հիմնարկի նախագծանախահաշվային աշխատանքների իրականացման համար հայտարարվող մրցույթի տեխնիկական բնութագիրը: Ներկայումս իրականացվում է նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման գործընթացը:
Վերոնշյալի արդյունքում՝ նախատեսվում է առաջիկա 3-4 տարիների ընթացքում շահագործման հանձնել գերմանական սանրաձև քրեակատարողական հիմնարկի մոդելին համապատասխան նոր հիմնարկ, որը կունենա 800-850 անձանց պահման համար նախատեսված պայմաններ, ներառյալ՝ մոտ 300-350 կալանավորվածներին պահելու վայր, մոտ 150 անձի համար նախատեսված ստացիոնար, մոտ 250-300 անձի համար նախատեսված միջին և ցածր անվտանգային մասնաշենքեր (գոտիներ):
Նոր քրեակատարողական հիմնարկի կառուցմամբ հնարավոր կլինի ապահովել պատշաճ պայմաններ վերականգնողական աշխատանքներ կազմակերպելու, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց նկատմամբ արդյունավետ վերահսկողություն ապահովելու համար:

Ենթակետ 2: Ռազմավարությամբ հաստատված՝ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավման և քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման շրջանակներում, ի թիվս այլնի, նախատեսված է Ազգային անվտանգության ծառայության վարչական շենքից ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի տեղափոխման գործընթացը քննարկել նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման շրջանակներում:

Ենթակետ 3: Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1755-Ն որոշման համաձայն՝ 2022 թվականի հունվարի 1-ից դադարեցվել է ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի գործունեությունը: ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձինք և դատապարտյալները տեղափոխվել են ԱՆ Նուբարաշեն և Արմավիր քրեակատարողական հիմնարկներ: ԱՆ Արմավիր քրեակատարողական հիմնարկի միջին անվտանգային գոտու դատապարտյալները տեղափոխվել են ԱՆ Սևան քրեակատարողական հիմնարկ, որոնց համար ԱՆ Սևան քրեակատարողական հիմնարկի մասնաշենքերից մեկը վերակառուցվել է և այլ մասնաշենքերից մասնանջատվել պարիսպով: Տվյալ մասնաշենքը վերանորոգվել է, հարդարվել են սանհանգույցները, բաղնիքները, կացարանները:

Հարկ է նշել, որ կատարվել են համապատասխան ուղղումներ կադաստրի սեփականության վկայականում, տարածքում իրականացվել են չափագրման աշխատանքներ:
ԱՆ Սևան քրեակատարողական հիմնարկի արտադրական տարածքում եվրոպական չափորոշիչներին համապատասխան կալանավորված անձանց համար նոր մեկուսարանի մասնաշենքի կառուցման նպատակով՝ իրականացվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման գործընթացը և եզրակացության տրամադրման նպատակով ուղարկվել է փորձաքննության:

Ենթակետ 4: ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի փոխարեն 350 լրակազմ ունեցող նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման համար 2022 թվականին պլանավորվում էր վերանայել նախագծանախահաշվային աշխատանքների արդյունքները՝ գործընթացն սկսելու համար, սակայն Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղում ընտրված հողատարածքներից մեկը, որը համընկել էր Արդարադատության նախարարությանն ամրացված՝ քրեակատարողական նոր «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կառուցման համար նախատեսված հողատարածքի (10.63 հա) հետ, ամբողջությամբ փոխանցվել է Ազգային անվտանգության ծառայությանը՝ հաշվի առնելով սահմանների պաշտպանության ապահովման անհրաժեշտությունը:
Արդարադատության նախարարությունը առաջարկել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը նոր «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կառուցման համար տրամադրել այլ հողատարածք:
Ըստ այդմ, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից այլ հողատարածքի տրամադրումից հետո Արդարադատության նախարարության կողմից կդիտարկվի նոր «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կառուցման համար նախագծանախահաշվային աշխատանքների իրականացման հարցը:

Ենթակետ 5: ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում մինչև 200 լրակազմ ունեցող միջին անվտանգային գոտի ունեցող քրեակատարողական հիմնարկի համար անհրաժեշտ պահման պայմաններ ստեղծելու նպատակով Քրեակատարողական ծառայության կողմից հայտարարվել էր մրցույթ, որի արդյունքներով հաղթող ճանաչված «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2020 թվականի հուլիսի 8-ին կնքվել էր «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների պետական գնման պայմանագիր» ծածկագիր՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱԾՁԲ-20/2-1: Կնքված պայմանագրի շրջանակներում հիմնարկի մասնաշենքերից մեկում համապատասխան

շինարարական լուծումների (կառուցում, վերակառուցում) արդյունքում ապահովվել է կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար անհրաժեշտ բոլոր պահման պայմանները՝ ներառյալ առանձնացված զբոսահրապարակ, ճաշապատրաստման տեղամաս և այլն:
Իրականացված աշխատանքների արդյունքում հիմնարկի 2-րդ տեղամասում շուրջ 200 ազատազրկված անձանց համար ապահովվել է կիսաբաց ուղղիչ հիմնարկի պահման պատշաճ պայմաններ:

Մասնավորապես, վերակառուցվել և հարդարվել են 48 խցեր նախատեսված առավելագույնը 4 անձի համար, յուրաքանչյուրը 18 մետր քառակուսի բնակելի ընդհանուր մակերեսով՝ առանձնացված սանհանգույցով:

Կառուցվել և կահավորվել է առանձնացված ընդարձակ ճաշապատրաստման սենյակ և ճաշասրահ, զբոսահրապարակ, թեքահարթակ, զրուցարան, տեղադրվել են նստարաններ, ինչպես նաև կատարվել է տարածքի կանաչապատում:

Ենթակետ 6: ԱՆ Արմավիր քրեակատարողական հիմնարկում կառուցվել են ամբողջովին նոր և ժամանակակից օդափոխության, օդորակման՝ համատեղված ջեռուցման հետ, համակարգեր, որոնց շնորհիվ ռեժիմային գոտու 6 մասնաշենքերի 288 խցերում ամռանը կապահովվի 20-21 աստիճան ջերմություն, ձմռանը՝ 22-24 աստիճան ջերմություն, իսկ ամբողջ տարին օդի մաքրման նպատակով գործելու է օդափոխության համակարգը, որը հագեցած է նաև հակահրդեհային համակարգով:

Ենթակետ 7: ԱՆ Արմավիր քրեակատարողական հիմնարկի բժշկական ստացիոնար մասնաշենքում կառուցվել է թեքահարթակ դեպի զբոսաբակ, 1 բուժսենյակի սանհանգույցում և լոգարանում ստեղծվել են հատուկ պայմաններ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար: Իրականացվել են արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի նորոգում, ջրամատակարարման սարքերի, սարքավորումների փոխարինում՝ նորով, մասնակի վերանորոգվել է տաք ջրամատակարարման ցանցը:
Հարկ է նաև փաստել, որ բոլոր քրեակատարողական հիմնարկներում պայմանների բարելավման աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ. Կատարված է Կատարված է մեծ մասամբ **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ** Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 12

Ենթակետ 1. Միջազգային չափորոշիչների հիման վրա գնահատված են անչափահաս դատապարտյալների պահման պայմանները:

Ենթակետ 2. Ստեղծված է անչափահաս դատապարտյալների կարիքներին համապատասխանեցված ոչ բանտանման միջավայր:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Միջազգային չափորոշիչների հիման վրա գնահատվել և բարելավվել են անչափահաս դատապարտյալների պահման պայմանները:Կատարողականն ապահովելու ուղղությամբ 2022-2023 թվականների ընթացքում ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացվել են կանանց, անչափահասների, դպրոցի, ակումբի և մեկուսարանի ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի, սանհանգույցների և բաղնիքների վերանորոգման շինարարական աշխատանքներ: Ընդհանուր առմամբ, վերանորոգվել է 42 կետ սանհանգույց, 7 կետ բաղնիք, 1 լվացքատուն, 1 խոհանոց, 1 ճաշասրահ, 1 սենյակ՝ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կալանավորված անձի համար:
Բժշկական օգնության և սպասարկման համար նախատեսված ստորաբաժանումում իրականացվել են վերանորոգման և հարդարման աշխատանքներ:
Համաձայն 24.08.2022թ. թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-22/11-1 պայմանագրի՝ իրականացվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, մասնավորապես.

- 220 գծմ. երկարությամբ նոր պարսպի և 4 դիտաշտարակի վերանորոգման շինարարական աշխատանքների համար,
- վարչական, կանանց, անչափահասների, դպրոցի, ակումբի մասնաշենքերի և թվով 4 կացարանների վերանորոգման և հարդարման, ինչպես նաև նշված մասնաշենքերի տանիքների մոտ 700 գծմ. երկարությամբ ջրհորդանների վերանորոգման շինարարական աշխատանքների համար:

2022 թվականի դեկտեմբերին «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում տեղի է ունեցել Եվրոպայի խորհրդի

աջակցությամբ կահավորված հոգեթերապևտիկ սենյակի բացում: Սենյակի հարդարումն իրականացվել է թերապևտիկ աշխատանքին համապատասխան հատուկ լուծումներով՝ հագեցած ինչպես անհատական, այնպես էլ խմբային թերապիա անցկացնելու հնարավորությամբ:
Հոգեթերապևտիկ սենյակի կահավորմանը զուգահեռ՝ Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացվել են քրեակատարողական հիմնարկների հոգեբանների մասնագիտական վերապատրաստումներ՝ թերապևտիկ աշխատանքի (այդ թվում՝ արտ-թերապիայի) հմտությունները զարգացնելու նպատակով:
Մինչև 19 տարեկան անազատության մեջ պահվող անձինք ընդգրկված են «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող հանրակրթական ծրագրում:
Մինչև 19 տարեկան անազատության մեջ պահվող անձինք օգտվում են գրադարանից, ամենօրյա զբոսանքից, կալանավորված անձանց պահելու վայրում առկա մարզասենյակից, որը համալրված է մարզագույքով (թենիսի սեղան, հեծանիվ, հեծանիվ դահուկ, ձեռքի ուժի համար նախատեսված սեղան, ուժային մարզասարքեր, պտտաձող, վազքուղի, գիմնաստիկայի մատ, ցատկապարաններ):
Հիմնարկի տեղամասերում առկա են կրոնական անկյուններ, որտեղ կազմակերպվում են մոմավառություն և խնկարկում: Շաբաթը մեկ անգամ եկեղեցու սպասավորի կողմից անցկացվում է հոգևոր թեմաներով զրույցներ:
2022-2023 թվականների ընթացքում կազմակերպվել են շաշկու, բազկամարտի, սեղանի թենիսի, տեգախաղի (դարթս) մարզական միջոցառումներ: Իրականացվել են նաև լուսավորչական և մշակութային միջոցառումներ:
Անազատության մեջ պահվող անչափահասների կարիքների հաշվառմամբ նրանց համար պահման պայմանների բարելավումը կրում է շարունակական բնույթ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.
ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 13

Ենթակետ 1. Գնահատվել են քրեակատարողական հիմնարկներում առկա լրակազմերը և, ըստ քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների հնարավորության, կատարվել է վերաբաշխում:

Ենթակետ 2. Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումից, շենքային պայմանների բարելավումից հետո գնահատվել է քրեակատարողական հիմնարկներում առկա լրակազմերը և կատարվել համաչափ վերաբաշխում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Գնահատվել են ԱՆ քրեակատարողական հիմնարկներում առկա լրակազմերը և շենքային պայմանների հնարավորությունները, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքով նախատեսված՝ քրեակատարողական հիմնարկներում երեք անվտանգային գոտի սահմանելու վերաբերյալ իրավակարգավորումները և Արդարադատության նախարարի 2022 թվականի հուլիսի 21-ի N 397-Ն հրամանով քրեակատարողական հիմնարկներում սահմանվել են նոր անվտանգային գոտիների տեսակներ և լրակազմեր:

Բացի այդ, գնահատելով ԱՆ քրեակատարողական հիմնարկներում առկա լրակազմերը և շենքային պայմանների հնարավորությունները՝ Արդարադատության նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N 787-Ն հրամանով փոփոխություններ են կատարվել Արդարադատության նախարարի 2022 թվականի հուլիսի 21-ի N 397-Ն հրամանում, որով քրեակատարողական հիմնարկներում սահմանվել են անվտանգային գոտիների նոր լրակազմեր:

Դատապարտյալների տեղաբաշխումը, ըստ անվտանգային գոտիների, կրում է շարունակական բնույթ, որը, ի թիվս այլ նպատակների, ուղղված է նաև քրեակատարողական հիմնարկներում լրակազմերի համաչափ բաշխվածությունն ապահովելուն:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 14

Ենթակետ 6. Բարձրացվել է արտակարգ իրավիճակներում քրեակատարողական հիմնարկների դիմակայունության մակարդակը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.
Ենթակետ 6: ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի N 633 որոշման համաձայն՝ Արդարադատության նախարարության 10 քրեակատարողական հիմնարկներում լրամշակվել, ՆԳՆ տարածքային փրկարար ծառայության հետ համաձայնեցվել և քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից հաստատվել են քրեակատարողական հիմնարկների քաղաքացիական պաշտպանության պլանները, որով սահմանվում են հիմնարկի խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը՝ քրեակատարողական ծառայողների (աշխատակիցների), կալանավորված անձանց, դատապարտյալների և հիմնարկում գտնվող այլ անձանց ու նյութական արժեքների պաշտպանության համար՝ Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում: Քաղաքացիական պաշտպանության պլանների հիման վրա քրեակատարողական հիմնարկներում ձևավորված են քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ որոշակի պայմաններում ստեղծված արտակարգ իրավիճակների դեպքում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար:
ԱՆ քրեկատարողական ծառայության պետի 2023 թվականի հունվարի 24-ի 40/4-297 ցուցումի համաձայն հաստատված դասընթացների ծրագրի հիման վրա քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում քաղաքացիական պաշտպանության ոլորտի

պատասխանատուների կողմից կազմակերպվում և իրականացվում են քրեակատարողական ծառայողների (աշխատակիցների) ուսուցում՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով»: Դասընթացները նպատակ են հետապնդում զարգացնել քաղաքացիական պաշտպանության ոլորտում քրեակատարողական ծառայողների (աշխատակիցների) գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: Արտակարգ իրավիճակներում ծառայողների (աշխատակիցների) գիտելիքները, հմտություններն ու կարողությունները քաղաքացիական պաշտպանության ոլորտում զարգացնելու նպատակով Արտակարգ իրավիճակների նախարարության հետ ձեռք բերված պայմանավորվածությամբ իրականացվել է 23 ծառայողների (աշխատակիցների) ուսուցանում Արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում:

Սույն թվականի ապրիլի 28-ին ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի անձնակազմի, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների անձնակազմերի շրջանում կազմակերպել և անցկացվել է ուսումնական վարժանք՝ «Հավաք» ազդանշանի դեպքում անձնակազմերի գործողությունները հստակեցնելու, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ուժերը պատրաստականության բերելու նպատակով:

Սույն թվականի մայիսի 16-ից մինչև 26-ն ընկած ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկներում անց է կացվել ուսումնական վարժանք՝ «Ուժեղ երկրաշարժի դեպքում ծառայողների (աշխատակիցների) գործողությունների կազմակերպում և իրականացում» թեմայով, որի շրջանակներում իրականացվել է հիմնարկի վարչական շենքի ծառայողների (աշխատակիցների) մասնակի տարհանում:

Քրեակատարողական ծառայության պետի հանձնարարականի համաձայն՝ զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության բաժանմունքը հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել է Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի աշխատակիցների այցելություններ Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմին և քրեակատարողական հիմնարկներ՝ հրդեհային անվտանգության արդյունավետության գնահատման նպատակով:

Նախաձեռնվել և սկսվել է գործընթաց թվով 38 լրացուցիչ կրակմարիչներ (32 հատ ՕՄ-5, 6 հատ ՕՊ-5) ձեռք բերելու նպատակով: Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի տեղակայման շենքի տարհանման ելքերը և երթուղիները սարքավորվել են վթարային լուսավորությամբ:

ԱՆ քրեակատարողական հիմնարկներ իրականացված պարբերաբար այցելությունների ընթացքում իրականացվել է քրեակատարողական հիմնարկների քաղաքացիական պաշտպանության վիճակի ուսումնասիրություն, վեր են

հանվել առկա խնդիրները և բացթողումները, համապատասխան ծառայողներին ցուցաբերվել է գործնական և մեթոդական օգնություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.
ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 17

Ենթակետ 1. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է միջին մասնագիտական «Իրավագիտություն» և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության «քրեակատարողական գործ» մասնագիտության կազմակերպում:

Ենթակետ 2. Կազմակերպվում է «Իրավագիտություն» մասնագիտության միջին մասնագիտական կրթություն:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.
«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ը նախնական (արհեստագործական) կրթության «Քրեակատարողական գործ» մասնագիտության «Քրեակատարող» որակավորման պետական կրթական չափորոշիչով կրթական ծրագրով գործունեություն իրականացնելու համար Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ ՀՀ ԿԳՄՍՆ) 2016 թվականի ապրիլի 21-ի N 325-Ա/2 հրամանով ստացել է լիցենզիա:
Հարկ է նշել, որ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ը տարիներ շարունակ ԿԳՄՍՆ-ի կողմից համապատասխան լիցենզիայի առկայությամբ իրականացրել է «Իրավագիտություն» մասնագիտության միջին մասնագիտական կրթություն:
Այդուհանդերձ, հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում «Իրավագիտություն» մասնագիտության

ուսուցանման համար պետական բյուջեից հատկացումներ չեն եղել և հնարավոր չի եղել ապահովել պետական ֆինանսավորմամբ «Իրավագիտություն» մասնագիտության ուսուցանումը: Ինչ վերաբերում է վճարովի հիմունքներով «Քրեակատարողական գործ» և «Իրավագիտություն» մասնագիտության ուսուցանմանը, հայտնում ենք, որ նման ձևաչափով դիմորդներ չեն եղել:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.
Կատարված է
Կատարված է մեծ մասամբ
ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 21

Ենթակետ 1. Ազատությունից զրկված անչափահասներն իրացնում են կրթություն ստանալու իրավունքը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.
Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ 2019 թվականից Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկ մուտք գործած մինչև 19 տարեկան յուրաքանչյուր ազատությունից զրկված անձ՝ կրթության անընդհատությունն ապահովելու նպատակով, ներգրավվում է քրեակատարողական հիմնարկում իրականացվող հանրակրթական ծրագրում:
2021-2022թթ. ուսումնական տարում ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ԱՆ «Նուբարաշեն», «Աբովյան», «Սևան» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում իրականացվել է մինչև 19 տարեկան անձանց հանրակրթություն, ներգրավված են եղել 13 անձ, իսկ 2022-2023թթ. ուսումնական տարվա ընթացքում «Իրավական կրթության և

վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ԱՆ «Աբովյան» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում իրականացվող հանրակրթական ծրագրին մասնակցել են մինչև 19 տարեկան 9 անձ:
Հարկ է նշել, որ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 250-Ա/2 և 251Ա/2 հրամաններով ստացել է հանրակրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ և 2019 թվականի սեպտեմբերի 2-ից մինչ օրս իրականացնում է քրեակատարողական հիմնարկներում գտնվող մինչև 19-ը տարեկան դատապարտված և/կամ կալանավորված անձանց հանրակրթությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.
ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 22

Ենթակետ 4. Քրեակատարողական բոլոր հիմնարկներում իրականացվում են կրթական ծրագրեր:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.
Ազատությունից զրկված անձանց շրջանում մասնագիտական կրթության նպատակով ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում կրթության ծրագրեր իրականացնելու նպատակով՝ 2023 թվականի 1-ին

կիսամյակում «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագրի շրջանակներում ԱՆ «Աբովյան», «Արթիկ», «Արմավիր», «Նուբարաշեն», «Վարդաշեն», «Վանաձոր», «Սևան» և «Գորիս» քրեակատարողական հիմնարկներում իրականացրել է հետևյալ դասընթացները՝ Դեկորատիվ կիրառական արվեստ վիտրաժ, կոլաժ, խեցեգործություն, բատիկա, գծանկար, գծագրություն, Համակարգչային հմտություններ, Էթիկա և հաղորդակցություն, Օտար լեզու ռուսերեն և անգլերեն, Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ, Ընտանեկան բռնության կանխարգելում հույզերի կառավարում, Վարսավիրական հմտություններ, Կարի հիմունքներ, Կահույքաշինության հիմունքներ, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել է շուրջ 137 անձ որից՝

ԱՆ «Արմավիր» ՔԿՀ՝ 44

ԱՆ «Սևան» ՔԿՀ՝ 27

ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ՝ 10

ԱՆ «Արթիկ» ՔԿՀ՝ 18

ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ՝ 12

ԱՆ «Աբովյան» ՔԿՀ՝ 11

ԱՆ «Գորիս» ՔԿՀ՝ 8

ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ՝ 7:

Բացի այդ, զբաղվածության նպատակային ծրագրեր մշակելու և շարունակաբար իրականացնելու և դրանք զարգացնելու նպատակով ԱՆ քրեակատարողական ծառայությունը «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության, Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի և «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի հետ կնքել է համագործակցության հուշագրեր:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

Կատարված է

Կատարված է մեծ մասամբ

ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ

Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 25

Ենթակետ 2. Մասնագիտական կրթական ծրագրերն իրականացվում են:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4.1-ին մասի համաձայն՝ ազատազրկման ձևով պատիժ կրող այն անձինք, որոնց պատժի կրման ավարտին մնացել է մինչև վեց ամիս, և որոնք, որպես աշխատանք փնտրող անձ, հաշվառվել են «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի կողմից, իրավունք ունեն ընդգրկվելու ամենամյա ծրագրի շրջանակներում կազմակերպվող մասնագիտական ուսուցման ծրագրերում: Դրա հիման վրա մասնագիտական ուսուցում կարող է կազմակերպվել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող այն մասնագիտությունների գծով, որոնք հնարավոր է ուսուցանել կարճաժամկետ դասընթացների (մինչև 5 ամիս տևողությամբ) միջոցով:

ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման հավելված N 11-ով սահմանված ընթացակարգի համաձայն՝ Զբաղվածության պետական գործակալության և Արդարադատության նախարարության համագործակցության արդյունքում կազմակերպվել է մասնագիտական ուսուցման ծառայությունների գնման գործընթացի իրականացում՝ հաշվապահ, փայտյա գեղարվեստական իրեր պատրաստող, ծեփագործ, ավտոփականագործ, համակարգչային օպերատոր, կոշկակար, խոհարար, դիմահարդար, տեխնիկ-մեխանիկ, խառատ և կահույքագործ մասնագիտությունների գծով 29 անձի ուսուցումն ապահովելու նպատակով: Ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով ներկայացված հայտում ընդգրկված անձանցից 13-ը եղել են ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկից, 7-ը՝ ԱՆ «Հրազդան», 4-ը՝ ԱՆ «Աբովյան», 3-ը՝ ԱՆ «Արմավիր», 2-ը՝ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկներից:

Զբաղվածության պետական գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով հայտարարված գնման գործընթացին ուսուցման

ծառայություններ մատուցող որևէ կազմակերպություն չի մասնակցել, որի պատճառով նշված շահառուների մասնագիտական ուսուցումը չի իրականացվել:
Հաշվի առնելով պատժի կրման ավարտին նախորդող ժամանակահատվածում դատապարտյալների մասնագիտական ուսուցման համար համապատասխան ծառայությունների ներգրավման բարդությունները՝ նշված խնդիրը որոշակիորեն հաղթահարելու նպատակով ավելացվել են ԱՆ քրեակատարողական հիմնարկներում իրականացվող մասնագիտական դասընթացների քանակը և տեսակները, որոնք նկարագրված են 22-րդ կետի 4-րդ ենթակետում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.
Կատարված է
Կատարված է մեծ մասամբ
ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 27

Ենթակետ 2. Ազատությունից զրկված անձանց (դատապարտյալների և /կամ կալանավորված անձանց) համար իրականացվում է հանրակրթություն՝ անկախ տարիքից:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.
Անկախ տարիքից՝ ազատությունից զրկված անձանց համար հանրակրթության իրականացման ապահովման նպատակով Արդարադատության նախարարության համակարգմամբ իրականացվել են մի շարք գործընթացներ:
Արդարադատության նախարարության կողմից իրականացվող ոլորտային շարունակական բարեփոխումների արդյունքում ընդունվել է «Կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2022 թվականի մայիսի 25-ի ՀՕ-130-Ն օրենքը, որի համաձայն «Կրթության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասը լրացվել է նոր՝ չորրորդ

պարբերությամբ. «Պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման համար սույն հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերությունում նշված տարիքային սահմանափակումը չի տարածվում քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող այն դատապարտյալների վրա, որոնց պատժից ազատման ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է մեկ տարուց ավելի: Սույն պարբերությունում նշված անձինք իրենց ցանկությամբ կարող են իրացնել իրենց կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին»:

Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով կրկին իրականացվել է համապատասխան մոնիթորինգ, որի արդյունքներով քրեակատարողական հիմնարկներում թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալների թիվը կազմել է 210:

Բոլոր քրեակատարողական հիմնարկներում իրականացվել է 19 տարեկան և ավելի տարիք ունեցող, ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների նախնական կրթական կարիքի գնահատում, որի արդյունքում տարանջատվել է կրթական երեք աստիճան՝ միջին դպրոց (5-9-րդ դասարաններ), ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ) և անձինք, որոնք տառաճանաչ չեն կամ դպրոց չեն հաճախել, որոնց թիվը կազմել է 92, միջինը 39-ից 41 տարեկան:

Հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկներում ուսումնառություն ստացող դատապարտյալների կարգավիճակի և ունեցած բազային հանրակրթական գիտելիքների առանձնահատկությունները՝ ընդհանուր հանրակրթության ուսուցման մեթոդաբանության հիմքով մշակվել և հաստատվել է ուսումնառության առանձնահատկություններով պայմանավորված նոր մեթոդաբանություն:

Համապատասխան քրեակատարողական հիմնարկներում ընտրվել, առանձնացվել են հանրակրթություն իրականացնելու համար նախատեսված տարածքներ, ուսումնական սենյակները վերանորոգվել են, ձեռք է բերվել այդ սենյակները կահավորելու համար անհրաժեշտ ուսումնաօժանդակ գույք ուսումնական սեղաններ, աթոռներ, գրատախտակներ, համակարգչային տեխնիկա և այլն, ինչպես նաև սովորողներին տրամադրվող գրենական պիտույքներ և այլ նյութեր:

Իրականացվել է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ՝ համաձայն Կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 336-Ն հրամանի:

Մրցույթի արդյունքում ընտրված ուսուցիչների հետ իրականացվել են մասնագիտական վերապատրաստումներ՝ ուղղված կրթության բնագավառում իրավական, մանկավարժական, հոգեբանական, ուսուցման մեթոդաբանության վերաբերյալ գիտելիքների և գործնական կարողությունների ձևավորմանը և դրանց ամրապնդմանը:
Քրեակատարողական հիմնարկներում հանրակրթական և ոչ ֆորմալ կրթության ծրագրերի իրականացման, կազմակերպչական աշխատանքների աջակցման, դրանց պատշաճ, կանոնակարգված, անխափան և ժամանակին իրականացման նպատակով բոլոր քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններից նշանակվել են համապատասխան աջակցող աշխատակիցներ:
Արդարադատության նախարարության համակարգմամբ իրականացված հսկայածավալ աշխատանքի արդյունքում մշակվել է քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող □19 և ավելի տարեկան□ դատապարտյալների հանրակրթության ուսումնական ծրագիրը, որի արդյունքում 2022 թվականի սեպտեմբերից Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում գտնվող դատապարտյալները կարող են միջնակարգ կրթություն ստանալ նաև 19 տարեկանից հետո՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:
2022 թվականի սեպտեմբերից «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ԱՆ □Արմավիր□, □Նուբարաշեն□, □Սևան□, □Արթիկ□, □Աբովյան□ և □Վանաձոր□ քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվել է ազատությունից զրկված անձանց համար հանրակրթության իրականացում՝ անկախ տարիքից, որին 2023 թվականին ներգրավվել է 102 դատապարտյալ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.
ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 31

Ենթակետ 1. Քրեակատարողական հիմնարկներում ապահովվել են հաշմանդամություն ունեցող ազատությունից զրկված անձանց համար մատչելի պայմաններ (թեքահարթակներ, բազրիքներ, համապատասխան սանհանգույցներ և այլն) և համապատասխան հարմարանքներ (տեսողության, լսողության և խոսքի խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար վերականգնման տեխնիկական միջոցներ և այլ օժանդակ պարագաներ):

Ենթակետ 3. Քրեակատարողական ծառայողները հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու համար վերապատրաստվել են:

Ենթակետ 4. Քրեակատարողական հիմնարկներն ապահոված են Բրայլյան տառատեսակի գրքերով, ձայնային գրքերով, սուրդոթարգմանության տեսանյութերով և այլ տեղեկատվական նյութերով:

Ենթակետ 5. Նախատեսված են հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության ստացման և հաղորդման հնարավորությունն ապահովող տեխնիկական և աշխատակարգային լուծումներ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Ենթակետ 1: Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց (ՀԽՈՒԱ) համար հասանելի միջավայր ապահովելու նպատակով Արդարադատության նախարարության քրակատարողական ծառայության և «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերության միջև կնքվել է թիվ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-22/6» պայմանագիրը, համաձայն որի՝ ԱՆ «Վարդաշեն», «Սևան», «Արմավիր», «Արթիկ» և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկներում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց (ՀԽՈՒԱ) համար համապատասխան պայմաններ ստեղծելու նպատակով կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա իրականացվել են համապատասխան շինարարական աշխատանքներ: Սանհանգույցներում և լոգարաններում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար տեղադրվել են զուգարանակոնքեր, հատուկ բռնակներ և լվացարաններ:

Կառուցվել են թեքահարթակներ, ստեղծվել են հարմարեցված պայմաններ՝ հատուկ սարքավորումների տեղադրմամբ: Այսպիսի աշխատանքները կրելու են շարունակական բնույթ՝ ըստ քրեակատարողական հիմնարկների կարիքների գնահատման արդյունքների:

Ենթակետ 3: Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողների վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են ըստ կառուցվածքային ստորաբաժանումների և անցկացվում են Արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ Արարադատության նախարարի հրամանով հաստատված ժամանակացույցով և թեմաներով: Հաշվի առնելով Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, այդ թվում՝ նաև քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց հետ իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները՝ վերապատրաստման դասընթացներում ներառվել են հետևյալ թեմաները՝

- Քրեակատարողական ծառայողի բարեվարքություն,
- Կյանքի իրավունք,
- Կոնֆլիկտների կառավարում,
- Միջանձնային հարաբերությունների հոգեբանական առանձնահատկություններ,
- Սթրեսի հաղթահարման տեխնիկաներ,
- Լարվածությունը նվազեցնելու հմտություններ,
- Քրեակատարողական և քաղաքացիական ծառայողների իրավունքների և պարտականությունների ընդհանրական նկարագիր,
- Քրեակատարողական ծառայությունում անձնական տվյալների պաշտպանության առանձնահատկություններ,
- Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ պայքարի միջազգային չափանիշներ,
- Քրեակատարողական համակարգում խոցելի խմբերի հետ աշխատանքի առանձնահատկություններ,
- Քրեակատարողական հիմնարկներում պահվող 65 տարին լրացած (ծեր) դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկություններ,

• Քրեակատարողական հիմնարկներում պահվող հաշմանդամություն ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկություններ,
• Քրեակատարողական հիմնարկներում պահվող կին դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկություններ:
2019-2023 թվականների ընթացքում կազմակերպվել է քրեակատարողական ծառայության տարբեր ստորաբաժանումների ծառայողների վերապատրաստում, ընդ որում՝ 2019 թվականին՝ 540 ծառայող, 2020 թվականին՝ 540 ծառայող, 2021 թվականին՝ 550 ծառայող, 2022 թվականին՝ 550 ծառայող, 2023 թվականին՝ 510 ծառայող:

Ենթակետ 4: Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար Բրայլյան տառատեսակի գրքերը, ձայնային գրքերը, սուրդոթարգմանության տեսանյութերը, ինչպես նաև այլ տեղեկատվական նյութերը հասանելի դարձնելու նպատակով դեռևս 2020 թվականին Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի նախաձեռնությամբ Հայաստանի ազգային գրադարանի ղեկավարության և մասնագիտացված այլ կառույցների հետ իրականացված բանավոր քննարկումների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ անհրաժեշտության դեպքում նման գրականություն և տեղեկատվական նյութեր ձեռք կբերվեն և կփոխանցվեն հաշմանդամություն ունեցող կալանավորված անձանց կամ դատապարտյալներին:
Նախատեսվում է աշխատանքներ տանել պետական միջոցների հաշվին ԱՆ քրեակատարողական հիմնարկները Բրայլյան տառատեսակի գրքերով, ձայնային գրքերով, սուրդոթարգմանության տեսանյութերով և այլ տեղեկատվական նյութերով ապահովելու ուղղությամբ:
Միևնույն ժամանակ, խնդրում ենք ընդունել ի գիտություն, որ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող օտարերկրացիների իրավունքների և պարտականությունների իրազեկման միջոցառման իրականացման շրջանակում ՀՀ պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի ծառայություններ մատուցող անձի ծառայությունների ձեռքբերման նպատակով 2022 թվականի մարտի 16-ին, ՀՀ կառավարության 2018թ. նոյեմբերի 22-ի N 1334-Ն որոշման պահանջների պահպանմամբ, Քրեակատարողական ծառայության կողմից հայտարարվել է մրցույթ, որի հաղթող է ճանաչվել «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն: Վերջինիս հետ կնքվել է համապատասխան ծառայությունների

մատուցման թիվ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԹԾՁԲ-22/1» պայմանագիը, որի շրջանակներում իրականացվելու է շուրջ 32 լեզուների թարգմանություն, այդ թվում նաև՝ սուրդոթարգմանություն խուլ ու համրերի համար, ընդ որում՝ կատարվելու են ոչ բարդ, միջին բարդության, միջին բարդության մասնագիտական, բարդ, բարդ մասնագիտական գրավոր և բանավոր թարգմանություններ 24 ժամ/7 օր աշխատանքային ռեժիմով (նաև հանգստյան և տոնական օրերին՝ առանց բացառության) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:
2023 թվականի ընթացքում ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով 2022 թվականի նոյեմբերի 16-ին Քրեակատարողական ծառայության կողմից կրկին հայտարարվել է մրցույթ, որի հաղթող են ճանաչվել 3 կազմակերպություններ, որոնց հետ կնքվել են համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Ենթակետ 5: ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող, հաշմանդամություն ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալներին Հայաստանի Հանրապետության պետական միջոցների հաշվին սուրդոթարգմանչի ծառայություններ մատուցող անձի ծառայությունների ձեռքբերման նպատակով 2022 թվականի մարտի 16-ին, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի N 1334-Ն որոշման պահանջների պահպանմամբ Ծառայության կողմից հայտարարվել է մրցույթ, որի հաղթող է ճանաչվել «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն: Վերջինիս հետ կնքվել է համապատասխան ծառայությունների մատուցման թիվ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԹԾՁԲ-22/1» պայմանագիը, որի շրջանակներում իրականացվելու է սուրդոթարգմանոթյուն խուլ ու համրերի համար 24 ժամ/7 օր աշխատանքային ռեժիմով (նաև հանգստյան և տոնական օրերին՝ առանց բացառության) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:
2023 թվականի ընթացքում ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով 2022 թվականի նոյեմբերի 16-ին Քրեակատարողական ծառայության կողմից կրկին հայտարարվել է մրցույթ, որի հաղթող են ճանաչվել 3 կազմակերպություններ, որոնց հետ կնքվել են համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագրեր:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.
ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 32

Ենթակետ 2. Գործնականում ազատությունից զրկված և հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների իրացումն ապահովելու, իրավունքահեն մոտեցում (right-based approach) դրսևորելու նպատակով քրեակատարողական հիմնարկի վարչակազմը վերապատրաստվել է:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողների վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են ըստ կառուցվածքային ստորաբաժանումների և անցկացվում են Արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ Արարադատության նախարարի հրամանով հաստատված ժամանակացույցով և թեմաներով:

Հաշվի առնելով Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, այդ թվում՝ նաև քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց հետ իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները՝ վերապատրաստման դասընթացներում ներառվել են հետևյալ թեմաները.

- Քրեակատարողական ծառայողի բարեվարքություն.
- Քրեակատարողական համակարգում խոցելի խմբերի հետ աշխատանքի առանձնահատկությունները.
- Քրեակատարողական հիմնարկներում պահվող 65 տարին լրացած (ծեր) դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունները.
- Քրեակատարողական հիմնարկներում պահվող հաշմանդամություն ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունները.
- Քրեակատարողական հիմնարկներում պահվող կին դատապարտյալների և կալանավորված անձանց հետ

աշխատանքի առանձնահատկությունները:
2023 թվականին կազմակերպվել է Քրեակատարողական ծառայության տարբեր ստորաբաժանումների թվով 510 ծառայողների վերապատրաստում:

ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 40

Ենթակետ 4. Իրականացվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի՝ ինքնավնասման վտանգի նախանշանների և այդ կապակցությամբ ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ ուսուցում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.
Արդարադատության նախարարության բոլոր քրեակատարողական հիմնարկներում 2022 թվականի օգոստոսից գործարկվում են ազատությունից զրկված անձանց ինքնասպանության և ինքնավնասման ռիսկի զննության և գնահատման գործիքակազմ, որի ներդրման աշխատանքները կատարվել են Արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի համագործակցության շրջանակում: Եվրոպայի խորհրդի և ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից 2021 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում Արդարադատության նախարարության երեք քրեակտարողական հիմնարկներում իրականացվել է նշված գործիքակազի պիլոտավորում, որին նախորդել են տվյալ քրեակատարողական հիմնարկների համապատասխան աշխատակիցների ուսուցման

դասընթացներ՝ ինքնասպանության և ինքնավնասման վտանգի նախանշանների, անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման վերաբերյալ: Պիլոտավորման ընթացքում և ավարտին կազմվել են համապատասխան հաշվետվություններ գործնականում առաջացող խնդիրների և կիրառման այլ առանձնահատկությունների վերաբերյալ: Կատարված պիլոտավորման արդյունքների և հաշվետվությունների հիման վրա գործիքակազմը և դրա կիրառման ընթացակարգը ենթարկվել են լրամշակման, ինչից հետո՝ 2022 թվականին Արդարադատության նախարարի համապատասխան հրամանների համաձայն՝ Արդարադատության նախարարության բոլոր քրեակատարողական հիմնարկներում ներդրվել է վերոնշյալ գործիքակազմը, որի կիրառմամբ քրեակատարողական հիմնարկներում իրականացվում են ինքնասպանության և ինքնավնասման ռիսկի զննություն, գնահատում, ինչպես նաև բացահայտված և գնահատված ռիսկի կառավարման համապատասխան աշխատանքներ:

Գործիքակազմի ներդրմանը նախորդող ժամանակահատվածում իրականացվել են համապատասխան աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ: Գործիքակազի ներդրումից հետո դրանց կիրառման և արդյունքների համաձայն ենթադրվող աշխատանքների կատարման ընթացքում առաջացող խնդիրների և պրակտիկ փորձի առանձնահատկությունների հետ կապված մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով ԵԽ փորձագիտական խմբի և ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի համապատասխան աշխատակիցների կողմից իրականացվել են այցելություններ կամ կազմակերպվել են առցանց քննարկումներ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում, իրականացված քննարկումների արդյունքների հիման վրա կազմված ուղեցույցները տրամադրվել են ԱՆ քրեակատարողական հիմնարկների և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանումներին:

Հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի կողմից առաջիկայում նախատեսվում է իրականացնել ինքնասպանության և ինքնավնասման գործիքակազմի կիրառման, իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.
ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 42

Ենթակետ 3. Իրականացվել է հոգեբանների մասնագիտական վերապատրաստում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

2023 թվականին միջազգային համագործակցության գերմանական /IRZ/ հիմնադրամի կողմից իրականացվել է քրեակատարողական համակարգում աշխատող հոգեբանների և սոցիալական աշխատողների վերապատրաստման եռօրյա դասընթաց՝ «Ախտորոշմանն ու կանխատեսմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև թերապիայի ծրագրերի իրականացում» թեմայով:

Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվել է «Մասնագիտացված հմտությունների և գիտելիքների վերապատրաստում քրեակատարողական հիմնարկներում աշխատող հոգեբանների և հոգեբույժների համար» թեմայով մասնագիտական վերապատրաստում: Հաջորդող ժամանակահատվածում փորձագետների կողմից կազմվել է նաև համապատասխան ձեռնարկ և տրամադրվել մասնագետներին:

2023 թվականին Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների հոգեբաններին մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի համապատասխան մասնագետների կողմից կազվել են «Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունների գնահատման հոգեախտորոշիչ մեթոդիկաներ» և «Անչափահասների հետ իրականացվող խմբային հոգեբանական աշխատանք» ձեռնարկներ և տրամադրվել են մասնագետներին, ինչպես նաև իրականացվել են մասնագիտական առցանց քննարկումներ:

Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում հոգեբանական ծառայությունների

որակը բարձրացնելու, այդ ծառայություններն առավել մատչելի դարձնելու նպատակով Արդարադատության նախարարության «Աբովյան», «Վանաձոր» և «Վարդաշեն» քրեակտարողական հիմնարկներում իրականացվել է ազատությունից զրկված անձանց հետ հոգեբանական աշխատանքների իրականացման համար սենյակի առանձնացում, վերանորոգում և կահավորում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.
ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱՉՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 48

Ենթակետ 2. Պրոբացիայի ծառայությունը վերազինվել է անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.
Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով տեխնիկական միջոցներով վերազինման աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Պրոբացիայի ծառայության գործառույթներն ամբողջությամբ էլեկտրոնայնին եղանակով իրականացնելու համար 2023 թվականի հոկտեմբերին մրցույթային ընթացակարգով ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա՝ 25 համակարգիչ՝ ամբողջը մեկում, թվով 45 գրաֆիկական պլանշետ, 45 մատնահետք կարդացող սարքեր, 45 բաշխիչ սարք, 45 համացանցային տեսախցիկ:
Հիմք ընդունելով Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը՝ համակարգչային տեխնիկայի լրացուցիչ խմբաքանակի գնման հայտ է ներկայացվել 2024 թվականի բյուջով նախատեսված միջոցներից:

2023 թվականի հունիսին մրցութային ընթացակարգով «Կարկոմավտո» ՍՊԸ-ից ձեռք է բերվել երկու հատուկ մասնագիտացված ավտոմեքենա՝ որոնք ծառայելու են որպես շարժական գրասենյակներ և մեկ տասնյոթ տեղանոց միկրոավտոբուս՝ պրոբացիայի շահառուների՝ ուսումնական կենտրոն (ք. Արարատ) փոխադրումն ապահովելու, ինչպես նաև վերջիններիս մշակութային, կրթական, մարզական, կրոնական և այլ միջոցառումների մասնակցությունն ապահովելու համար:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.
ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 51

Ենթակետ 4. Գործարկվել է էլեկտրոնային հսկողության համակարգը՝ ըստ փուլերի:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
Էլեկտրոնային հսկողությունն անհրաժեշտ է կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների (տնային կալանք, վարչական հսկողություն) կիրառման և ազատազրկման այլընտրանք հանդիսացող պատժի (ազատության

սահմանափակում) կատարման նպատակով:
Քրեական դատավարության օրենսգրքով որպես այլընտրանքային խափանման միջոցներ նախատեսված են տնային կալանքը և վարչական հսկողությունը: Քրեական օրենսգիրքը նախատեսում է ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակ, որը ազատության սահմանափակումն է (վերջինիս մասով կարգավորումներն ուժի մեջ են մտնելու 2023 թվականի հուլիսի 1-ից): Այս պատժատեսակը դատապարտյալին առանց հասարակությունից մեկուսացնելու, տնային պայմաններում հսկողության տակ պահելու հետ կապված այլընտրանքային պատիժ է, որը կարող է կիրառվել օրենքով նախատեսված որոշակի հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկվող անձանց նկատմամբ: Տվյալ պատժատեսակին դատապարտվողների՝ ուսումնառությունից օգտվելու իրավունքը չի սահմանափակվում, սակայն նրանց նկատմամբ կարող են կիրառվել օրենքով նախատեսված որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես՝ նրանց կարող է արգելվել որոշակի ժամերի բացակայել տնից, հաճախել տարբեր հաստատություններ (ակումբներ, ժամանցային այլ վայրեր և այլն): Թե՛ նշված խափանման միջոցները, թե՛ նշված նոր պատժատեսակն օբյեկտիվորեն հնարավոր է կիրառել էլեկտրոնային հսկողության միջոցների օգնությամբ, որոնք ամրացվում են ազատազրկված անձի կամ ձեռքին, կամ ոտքին: Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ ԱՆ պրոբացիայի ծառայությունը, որի վրա դրվելու է տնային կալանքի, վարչական հսկողության և ազատության սահմանափակման կատարումը, հնարավորություն է ունենալու հսկել անձի տեղաշարժը և խախտման դեպքում անմիջապես այն արձանագրել:
Սարքերի ձեռք բերման համար Արդարադատության նախարարությունը հայտարարել է թիվ ՀՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-22/18 ծածկագրով մրցույթը, որի շրջանակում կնքվել է «Պետության կարիքների համար համակարգչային հսկողության (էլեկտրոնային) համակարգի մատակարարման» թիվ ՀՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-22/18 պայմանագիրը հաղթող ճանաչված՝ ENIGMA information protection Systems Ltd. ընկերության հետ:
Հիշյալ համակարգի գործարկումն ապահովելու նպատակով Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնում էլեկտրոնային հսկողությունն իրականացնելու նպատակով համապատասխան տեխնիկական սարքավորումներով կահավորվել է հատուկ սենյակ:
Ուշադրության է արժանի նաև այն, որ սարքավորումների գործարկումն ապահովելու նպատակով վերապատրաստվել են Պրոբացիայի ծառայության իրավասու աշխատակիցները (վերապատրաստումները կրելու են շարունակական բնույթ), որի արդյունքում վերջիններս ձեռք են բերել նշված սարքավորումներից օգտվելու ինչպես տեսական, այնպես էլ գործնական հմտություններ, ծանոթացել են համակարգը գործարկող հավելվածին:

Վերապատրաստումների ընթացքում իրականացվել են նաև սիմուլյացիոն ահազանգեր՝ հնարավորինս նմանեցնելով խափանման միջոցի կիրառման կամ պատժի կատարման ընթացքում ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու դեպքերին և կատարվել են նման դեպքերում ձեռնարկվող միջոցառումները:
2023 թվականին ձեռք է բերվել 661 հսկողության սարք: 2023 թվականի հունվարից պրոբացիայի շահառուների նկատմամբ կիրառավել է 1005 հսկողության սարք:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱՁՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 55

Ենթակետ 3. Փորձարկման հիման վրա գործիքը կատարելագործվել է և ամբողջությամբ գործարկվում է Պրոբացիայի ծառայությունում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.
Արդարադատության նախարարի 2022 թվականի հունվարի 21-ի N 31-Լ հրամանով հաստատվել է ԱՆ պրոբացիայի ծառայության չափահաս շահառուի քրեածին կարիքների գնահատման էլեկտրոնային գործիքը՝ ըստ N 1 հավելվածի և Պրոբացիայի ծառայության անչափահաս շահառուի քրեածին կարիքների գնահատման էլեկտրոնային գործիքը՝ ըստ N 2 հավելվածի:
Պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը ամբողջությամբ կիրառվում է վերահսկողության տակ գտնվող շահառուների նկատմամբ:
Հիշյալ գործիքը հնարավորություն է տալիս Պրոբացիայի ծառայողներին իրականացնել պրոբացիայի շահառուների ռիսկերի արդյունավետ գնահատում և վեր է հանում վերջիններիս կարիքները: Արդյունավետ ռիսկերի և կարիքների

գնահատման արդյունքում դատարանին տրամադրվում է դատապարտյալի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման նպատակահարմարությունը:
Ներկայումս ԵԽ «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի շրջանակներում Պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը գտնվում է վալիդացման փուլում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 58

Ենթակետ 1. Մշակվել և իրականացվել են հասարակության շրջանում քրեական ենթամշակույթի նկատմամբ զրո հանդուրժողականության ապահովմանն ուղղված իրազեկման ծրագրեր:

Ենթակետ 2. Մշակվել և իրականացվել են իրազեկման ծրագրեր, որոնց հիման վրա անձինք (այդ թվում՝ դատապարտյալները և պրոբացիայի շահառուները) պարբերաբար տեղեկացվում են պետության կողմից քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում իրականացվող միջոցառումների, ինչպես նաև պատիժը կատարող կամ վերահսկողությունն իրականացնող մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ:

Ենթակետ 3. Մշակվել և իրականացվել են պատժից ազատվելուց հետո հասարակություն վերադարձած դատապարտյալների նկատմամբ հանրային դիրքորոշման փոփոխմանը և հանդուրժողականության աստիճանի բարձրացմանն ուղղված իրազեկման ծրագրեր՝ հիմքում ունենալով դատապարտյալների վերաինտեգրման

գործընթացի արդյունավետության բարձրացումը:

Ենթակետ 4. Արդարադատության շղթայում ընդգրկված մարմինների միջև արդյունավետ հաղորդակցության և քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում վարվող պետական քաղաքականության գաղափարախոսության ամրապնդման նպատակով պարբերաբար կազմակերպվել են աշխատաժողովներ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Մշակվել և իրականացվել են պատժից ազատվելուց հետո հասարակություն վերադարձած դատապարտյալների նկատմամբ հանրային դիրքորոշման փոփոխմանը և հանդուրժողականության աստիճանի բարձրացմանն ուղղված իրազեկման ծրագրեր՝ հիմքում ունենալով դատապարտյալների վերաինտեգրման գործընթացի արդյունավետության բարձրացումը:

Հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված աշխատանքներ են իրականացվում Արդարադատության նախարարության և Պրոբացիայի ծառայության պաշտոնական կայք էջերում՝ պարբերաբար ծառայության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կատարած աշխատանքների վերաբերյալ եռամսյա հաշվետվությունների ներկայացմամբ:

Շահառուների վերասոցիալականացման շրջանակում շահառուների համար պարբերաբար կազմակերպվում է իրազեկման միջոցառումներ՝ «Իրավագիտակցության բարձրացում», «Իրավունք, պարտականություն» թեմաներով դասընթացներ, որի շրջանակում շահառուները տեղեկանում են իրենց իրավունքների մասին: Նմանատիպ միջոցառումները կազմակերպվում են նաև այլ պետական և ոչ պետական կառույցների կողմից, որոնք լուսաբանվում են նաև տվյալ կառույցների կայք էջերի միջոցով:

Պատժից ազատվելուց հետո հասարակություն վերադարձած շահառուների նկատմամբ հանրային դիրքորոշման փոփոխման և հանդուրժողականության աստիճանի բարձրացման նպատակով շահառուների հաջողված դեպքերը տեսաֆիլմի միջոցով ներկայացվել են Արդարադատության նախարարության կայք էջում, ինչն էլ նպաստում է շահառուների վերաինտեգրման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Ներկայումս ակտիվ աշխատանքներ են տարվում ՀՀ-ում գործող ուսումնական հաստատությունների հետ, վերջիններիս մոտ իրազեկման դասաժամերի անցկացման, Պրոբացիայի ծառայությունում ուսանողների

գործնական պարապմունքների անցկացման, ինչպես նաև ծառայության գործառույթների իրազեկվացության բարձրացման այլ ծրագրերի համատեղ իրականացման ուղղությամբ:
ԱՆ քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ Հիմնարկ) անազատության մեջ պահվող յուրաքանչյուր կալանավորված անձ և դատապարտյալ, տեղեկացվում է իր իրավունքների և պարտականությունների մասին հիմնարկ մուտք գործելիս, ինչն ամրագրում է ստանում համապատասխան փաստաթղթերում՝ և հաստատվում կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից ստորագրությամբ:
Հիմնարկում անազատության մեջ պահվող անձանց բնակեցման վայրում, լինի դա խուց, թե կացարան, փակցված են կալանավորված անձանց և դատապարտյալների հիմնական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական թերթիկները, բացի այդ, իրազեկման և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը (տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների, ինչպես նաև այլ համապատասխան կազմակերպությունների թեժ գծերի համարները և այլ տեղեկատվություն) պարտադիր փակցվում են հեռախոսային կապի և տեսազանգի իրականացման սենյակներում, այդ թվում նաև այլ հասու վայրերում՝ կացարանների միջանցքներում, տեսակցությունների տրամադրման և փաստաթղթային ձևակերպման սենյակներում, ինչի արդյունքում տեղեկատվությունից կարող են օգտվել նաև անազատության մեջ պահվող անձանց հարազատները և այլ անձինք:
Քրեակատարողական ծառայության կողմից իրականացվող բարեփոխումների, միջոցառումների, քրեակատարողական օրենսդրության, այլ իրավական ակտերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը հրապարակվում է նաև Պրոբացիայի ծառայության պաշտոնական կայքէջում (www.penitentiary.am):
Հարկ է նշել նաև, որ 2023 թվականի ընթացքում ԱՆ քրեակատարողական ծառայության պաշտոնական կայքէջում (penitentiary.am), ֆեյսբուքյան էջում և ֆեյսբուքյան հաշվում հրապարակվել է քրեական ենթամշակույթի, քրեակատարողական հիմնարկներում արգելված իրերի, այդ թվում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին ուղղված նյութեր, ինչպես նաև՝ պաշտոնական, սպորտային, մշակութային, կրթական, հոգևոր և օպերատիվ թեմաներով ընդհանուր առմամբ 228 հրապարակումներ:
Անհրաժեշտ է նաև փաստել, որ հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի աշխատակիցների կողմից հիմնարկներում անազատության մեջ պահվող անձինք պարբերաբար բանավոր տեղեկացվում են նաև պետության կողմից քրեակատարողական հիմնարկներում իրականացվող միջոցառումների,

ինչպես նաև պատիժը կատարող կամ վերահսկողությունն իրականացնող մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ, տրամադրվում են անհրաժեշտ խորհրդատվություններ, կազմակերպվում են անհատական ընդունելություններ՝ տարաբնույթ հարցերի, իրավական օգնության տրամադրման, ինչպես նաև հոգեբանների և սոցիալական աշխատողների կողմից նեղ մասնագիտական խորհրդատվություններ, ինչը ընդգրկվում և իրականացվում է նույն ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցների ամենօրյա գործունեության շրջանակներում:
Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում վարվող պետական քաղաքականության գաղափարախոսության ամրապնդման նպատակով կազմակերպվել է 5 աշխատաժողովներ և միջոցառումներ, որոնք անցկացվել են Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում և քրեակատարողական հիմնարկներում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.
ԿԱՏԱՐՎԱԾ Է
Կատարված է մեծ մասամբ
Կատարված է մասնակի
Կատարված չէ